ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԵՑՈՒԹՅՈՒՆ 3
Ընդհանուր տեսքը 4
Սնուցումը 4
Գործարկումը 6
Ստեղնաշարը 6
Էկրանը 8
Հիմնական հրամանացանկը 9
ԲԱԼԱՀԱՆԸ 10
ՅԳԿԾԵՑՈՒ ԲԱԼԱՀԱՆԸ 13
ՄԵՀԱԿԱՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ 15
ԶՀԵՂՉԱՀԱՆԸ 15
ՀԱՅԱԽԿԱՆԻ ՄԱԽԻՆ 15
ԱՀԿԱՀԱՅԿԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 16
ԱՆԿԱՆԸՆ ԲԱՅԵՐԸ 16
ՀԵԼԱԽԵԽԱՀԱՄԱՀՆԵՐԸ 17
ԺԱՄԱՉԵՂԶԱԿԸ 18
ՀԱՇՇԻՄԸ 19
ՃԵԽԱՀԿԵՂՄ 20
ԱՀԺԵՂՅԹԻ ՃԵԽԱՆԱԿԵՂՄԸ 20
«ԴԱՀԻՃ» ԲԱԼԱԽԱՂԸ 21
ՀԱՄԱՇԽԱՀՀԱՅԻՆ ԺԱՄ 21
ԿԵՂԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ 22
PC-LINK 22
ԿԵՂԱԴՐԵՂՄ 24
Ցուցադրման լեզուն 24
Խորացված որոնում 24
Սլենգի զտիչը 24
Ռուսական ստեղնաշարը 25
Ստեղների ձայնը 25
Ժամացույցը 25
Ամսաթվի տեսքը 26
Ժամի տեսքը 26
Ժամացուցակի զարթուցիչը 26
Օրվա զարթուցիչը 26

Հիշողության ստուգումը 26
Տվյալների ջնջումը 27
Նշանաբառ սահմանեք 27
Տվյալների պաշտպանությունը 28
Պատկերի սրությունը 28
Խոսքի հատկանիշները 28
Ինքնանջատման ժամ..... 28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շնորհավորում ենք Ձեզ «Partner® ArER430T»-ի գնման կապակցությամբ: Այս սարքը «Ectaco» ընկերության լեզվաբանների, ինժեներների և ծրագրավորողների համատեղ ջանքերի արդյունքն է և պատկանում է ներկայումս գոյություն ունեցող հզորագույն ինտեգրացված թարգմանչական համակարգերի վերջին սերնդին: «Partner® ArER430T»-ում Դուք կգտնեք՝

- ❖ *ընդհանուր թվով մոտ 650 000 բառ պարունակող հիմնական բառարան (անգլերեն⇔հայերեն, անգլերեն⇔ռուսերեն, հայերեն⇔ռուսերեն երկկողմանի թարգմանությամբ բառարաններ), որոնցում ընդգրկված են բժշկական, տեխնիկական, իրավաբանական, գործարարական եզրեր, ինչպես նաև սլենգ, կայուն և առօրյայում գործածվող արտահայտություններ.*
- ❖ *անգլերենի քերականության էլեկտրոնային դասագիրք.*
- ❖ *ամերիկյան ամենագործածական արտահայտությունների ընտրանի.*
- ❖ *անգլերենի անկանոն բայերը.*
- ❖ *12 թեմատիկ խմբերի բաժանված անգլերեն/հայերեն/ռուսերեն զրուցարան.*
- ❖ *ռուսերեն և անգլերեն բառերի արտաբերման արդիական հնչյունային փոխակերպիչ.*
- ❖ *տեղեկություններ Հայաստանի մասին.*
- ❖ *նոր բառեր մուտքագրելու հնարավորություն.*
- ❖ *ակնթարթային հետադարձ թարգմանություն.*
- ❖ *ուղղագրության ստուգման մրցանակների արժանացած «Vector Ultima™» եռալեզու համակարգ*
- ❖ *որոնման համակարգով օժտված 128K հզորությամբ հայերեն/անգլերեն/ռուսերեն անձնական կազմակերպիչ՝ գործերը կազմակերպելու և հեռախոսահամարների համար.*
- ❖ *չափ ու կշռի և արժույթի փոխարկման ծրագրեր.*
- ❖ *տեղական ժամանակը և ժամային գոտիները.*
- ❖ *բարձր արագությամբ տվյալների փոխանակում համակարգչի հետ.*
- ❖ *եռալեզու ցուցադրում.*
- ❖ *Ավանդական և հնչյունային ռուսական ստեղնաշարեր.*
- ❖ *տվյալների պաշտպանության համակարգ.*
- ❖ *սլենգի զտիչ.*
- ❖ *հոսանքի արտաքին աղբյուրի միացման բնիկ.*
- ✓ «Ectaco»-ն շարունակաբար կատարելագործում է «Partner®» շարքին պատկանող էլեկտրոնային սարքերը՝ ապահովելու համար դրանց բարձր որակը և արտադրողականությունը: Ձեր ձեռք բերած

սարքի որոշ հատկանիշներ կարող են թեթևակիորեն տարբերվել սույն ձեռնարկում դրանց նկարագրությունից:

Ընդհանուր տեսքը

Ստորև պատկերված են «Partner® ArER430T»-ի ընդհանուր տեսքը և արտաքին ֆունկցիաները:



Սնուցումը

«ArER430T»-ն աշխատում է AAA (LR03) տիպի մարտկոցներով: Երբ մարտկոցները սկսվում են լիցքաթափվել, էկրանին զգուշացնող հաղորդում է հայտնվում:

Որպեսզի մարտկոցներն ամբողջապես չլիցքաթափվեն, և դրա հետևանքով օպերատիվ հիշողության մեջ պահվող տվյալները չկորչեն, *Արտասանել* ֆունկցիան չի գործի այն ժամանակ, երբ մարտկոցների լիցքն անհրաժեշտ մակարդակից ցածր է: Սարքի աշխատանքն ամբողջությամբ վերականգնելու և օգտվողի տվյալները չկորցնելու համար, հնարավորին չափ շուտ փոխեք բոլոր մարտկոցները: Նոր մարտկոցների հետ սարքի մեջ հին մարտկոցներ մի տեղադրեք:

✓ Փոփոխական հոսանքի կայունարար-տրանսֆորմատորը միացնելուց հետո, 1 րոպեում կվերականգնվեն սարքի բոլոր ֆունկցիաները:

✓ Խոսքի և PC-Link ֆունկցիաներն օգտագործելիս խորհուրդ է տրվում օգտվել հոսանքի արտաքին աղբյուրից:

Ինչպես փոխել մարտկոցները

- Համոզվեք, որ սարքն անջատված է: Սեղմեք ON/OFF կոճակը՝ սարքն անջատելու համար:

✓ Սարքը միացված ժամանակ չի կարելի հանել մարտկոցները: Դա կարող է լրջորեն վնասել այն: Եթե չի ստացվում սարքն անջատել, սեղմեք ստեղնաշարի աջ մասում գտնվող RESET կոճակը (O ստեղնի վերևում) և վերագործարկեք համակարգը:

- Դեպի դուրս սահեցնելով բացեք մարտկոցների բաժանմունքի կափարիչը:
- Հանեք օգտագործված մարտկոցները և փոխարինեք նորերով:

✓ Որպեսզի չկորցնեք օպերատիվ հիշողության մեջ պահված տվյալները, Դուք պետք է հասցնեք 2 րոպեում փոխել մարտկոցները: **Երկու րոպեից ավել սարքն առանց մարտկոցների մի՛ թողեք:** Օգտվողի տվյալների կորստի համար պատասխանատու չեն ո՛չ արտադրողը և ո՛չ էլ վաճառողը:

- Մարտկոցներն այն դիրքով տեղադրեք, որ դրանց ուղղությունը համապատասխանի մարտկոցների բաժանմունքի ներսում նկարված (+ -) նշաններին:
- Փակեք մարտկոցների բաժանմունքի կափարիչը՝ այն դեպի սարքը սահեցնելով: Համոզվեք, որ կափարիչը տեղն է ընկել:

✓ «ArER430T»-ն օժտված է սարքը հոսանքի արտաքին աղբյուրին միացնելու բնիկով:

✓ **Ոչ ճիշտ հաճախականության հոսանքից օգտվելու դեպքում սարքը կարող է փչանալ: Նման խափանումը ենթակա չէ երաշխիքային վերանորոգման:** Փոփոխական/հաստատուն հոսանքի կայունարար-

տրանսֆորմատորը պետք է ապահովի 6 վ. և առնվազն 300 մա. հաստատուն հոսանք:

✓ Համակարգչի հետ կապը բավականին շատ հոսանք է խլում: Նման գործողությունների ժամանակ աշխատեք միշտ օգտվել հոսանքի արտաքին աղբյուրից:

Գործարկումը

Սարքը գործի գցելու քայլերն անհրաժեշտ է կատարել՝

- ▫ երբ «ArER430T»-ն միացվում է առաջին անգամ.
- ▫ մարտկոցները հանելու դեպքում (օրինակ՝ դրանք փոխելիս).
- ▫ RESET կոճակի օգնությամբ համակարգը վերագործարկելուց հետո:

✓ RESET կոճակը գտնվում է ստեղնաշարի աջ մասում (O ստեղնի վերևում): Կոճակը կարելի է սեղմել որևէ սուր առարկայով, օրինակ՝ ամրակի ծայրով: Կոճակը սեղմելու համար չի կարելի ասեղ կամ գնդասեղ օգտագործել, քանի որ այն կարող է վնասել սարքը:

- Երբ էկրանին հայտնվի *Գործի գցե՞լ համակարգը(y/n)* հաղորդումը, սեղմեք N ստեղնը, որպեսզի համակարգիչը չվերագործարկվի և չգրանցի փոփոխությունները:
- Այնուհետև էկրանին կհայտնվի *Ջնջե՞լ օգտվողի տվյալները* հաղորդումը: Սեղմեք N կոճակը՝ Ձեր տվյալները սարքի հիշողության մեջ գրանցելու համար:

Համակարգը գործի է գցված հաղորդումը նշանակում է, որ համակարգի գործարկումն ավարտված է և գործարանում նախասահմանված հատկանիշները վերականգնված են:

Ստեղնաշարը

Ավանդական ամերիկյան «QWERTY» ստեղնաշարը պարունակում է նաև ռուսական և հայկական տառերը՝ ավանդական դասավորությամբ: Երկու տառ նշանակող ստեղների վերին տառը տպելու համար հարկավոր է սեղմել ALT+համապատասխան ստեղնը[1]: Ռուսական Э,Ж,Б,Ю,Ъ տառերը ստանալու համար հարկավոր է սեղմել ALT+համապատասխան ստեղնը:
Վերոհիշյալ տառերը մեծատառով տպելու համար հարկավոր է սեղմել SHIFT+ALT+համապատասխան ստեղնը:

[1] Այստեղ և այսուհետ՝ կոճակ1+կոճակ2 նշանակում է, որ հարկավոր է նախ սեղմել և բաց թողնել կոճակ1-ը, ապա սեղմել և բաց թողնել կոճակ2-ը:

«ArER430T»-ն ունի ինչպես ավանդական, այնպես էլ հնչյունային ռուսական ստեղնաշար:

Ավանդական ռուսական ստեղնաշարի դեպքում ռուսական տառերը համապատասխանում են սարքի ստեղների վրա նշվածին:

Հնչյունային ռուսական ստեղնաշարի դեպքում ռուսական տառերն իրենց հնչողությամբ համընկնում են անգլերեն տառերի հետ, օրինակ՝ ռուսական «Ф» տառը ստանալու համար հարկավոր է սեղմել «F» ստեղնը:

Ստորև բերված աղյուսակը պատկերում է ռուսական և անգլիական ստեղնաշարերը հնչյունային դասավորությամբ:[2]

q я	**w** ш/щ	**e** е/э	**r** р	**t** т	**y** ы	**u** у/ю	**i** и	**o** о	**p** п
a а	**s** с	**d** д	**f** ф	**g** г/ж	**h** х	**j** й	**k** к	**l** л	
	z з	**x** ь/Ъ	**c** ц/ч	**v** в		**b** б	**n** н	**m** м	

✓ Ի տարբերություն համակարգչի ստեղնաշարի՝ կարիք չկա որևէ ստեղն սեղմած պահել (օրինակ SHIFT-ը) մյուս ստեղնը սեղմելիս: Բավական է այն մեկ անգամ սեղմել և բաց թողնել:

Ազգային տառատեսակների առկա համակարգը կախված է նրանից, թե մուտքագրման ինչ լեզու է սահմանված: Մուտքագրման լեզուն կարելի է փոխել ⇔ կոճակի օգնությամբ: Կախված մուտքագրման լեզվի ընտրությունից՝ էկրանի վերին աջ անկյունում հայտնվում է՝ ԱՆԳ, ՀԱՅ կամ ՌՈԼՍ գրությունը:

Ֆունկցիոնալ ստեղնային հրամանները (shortcut keys)

ON/OFF	Միացնել կամ անջատել սարքը
RESET	Վերագործարկել համակարգը
SPELLER (SHIFT+ ▼ կամ ▲)	Միացնել ուղղագրության ստուգիչը

Մյուս ստեղնային հրամանները բացում են ստեղների վերևում նշված բաժինները (սեղմեք SHIFT+ տվյալ ստեղնը, օրինակ՝ SHIFT+DICT)

Վերահսկման և խմբագրման ստեղները

←, →	Շարժել մուտքանիշը (կուրսորը) / գունանշել / անցնել գլխավոր հրամանացանկի մի պատկերագրից մյուսին

[2] Աղյուսակում կոտորակից (/) հետո նշված տառերը մուտքագրելու համար սեղմեք ALT:

↓, ↑	Գունանշել / էջը վերև-ներքև սահեցնել / անցնել գլխավոր հրամանացանկի մի պատկերագրից մյուսին / փոխել արժեքները: ↑ կոճակի օգնությամբ կարելի է «ներմուծելու» (Insert) վիճակից անցնել «փոխարինելու» (Overwrite) վիճակին:
▼, ▲	Թերթել էջերը
ENTER	Կատարել
␣	Արանք (ազատ տարածք) մուտքագրել
ESC	Փակել ներկա պատուհանը / չեղարկել / վերադարձ նախորդ էջին
ALT	Մուտքագրել ստեղների վրա/վերը նշված լրացուցիչ տառերը
SHIFT	Տպել մեծատառ
←BS	Ջնջել մուտքանիշից ձախ գտնվող տառը
⇔	Փոխել մուտքագրման վիճակը կամ թարգմանության ուղղությունը
SHIFT+↑	Բացել լրացուցիչ պայմանանշանները[3]
SHIFT+↓	Բացել գրանցումը՝ փոփոխություններ կատարելու համար
SHIFT+ ←BS	Ջնջել գրանցումը
◄	Արտասանել անգլերեն կամ ռուսերեն գլխաբառը
SHIFT+◄	Արտասանել անգլերեն կամ ռուսերեն թարգմանությունը
A, P	Սահմանել AM կամ PM (երբ 12-ժամյա համակարգ է ընտրված)

Էկրանը

«Partner® ArER430T»-ը զինված է բարձր ճշգրտության էկրանով (160x64 պիկսել):

Ցուցիչ տողը գտնվում է էկրանի վերևում և կարող է ցույց տալ հետևյալ նշանները.

EDIT Ընթացիկ գրանցումը բաց է՝ փոփոխություններ

[3] Սեղմեք ▼ և ▲ կոճակները՝ տեղաշարժվելու համար պայմանանշանների երեք տողերի միջև: Սեղմեք համապատասխան թվի ստեղնը՝ տպելու համար Ձեր ցանկացած պայմանանշանը:

	կատարելու վիճակում
SHIFT	SHIFT ստեղնը սեղմված է
INS	Ընտրված է ներմուծման ռեժիմը
	Մարտկոցը լիցքաթափվում է
	Սարքը կողպված է
	Օրվա զարթուցիչը միացված է
▼▲	Աշխատում են վերև և ներքև սահելու կոճակները (Տեքստն ավելին է, քան երևում է էկրանին)
◀▶	Աշխատում են աջ և ձախ սահելու կոճակները

Հիմնական հրամանացանկը

«ArER430T»-ի ՀԻՄՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՑԱՆԿԸ բաղկացած է 16 հրաման-պատկերագրերից, որոնց օգնությամբ օգտվողը բացում է բառարանի տարբեր բաժինները:

- ՀԻՄՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՑԱՆԿԸ ցուցադրելու համար միացրեք սարքը կամ փակեք ներկա բաժինը:
- Մի պատկերագրից մյուսը կարելի է անցնել ↓,↑ կամ ←,→ կոճակների օգնությամբ:
- Գունանշված պատկերագրի բաժինը բաց անելու համար սեղմեք ENTER ստեղնը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՑԱՆԿՈՒՄ զետեղված պատկերագրերը ներկայացնում են հետևյալ բաժինները.

	Բառարան		Հաշվիչ
	Օգտվողի բառարան		Փոխարկում
	Քերականություն		Արժույթի փոխանակում
	Զրուցարան		«Դահիճ» բառախաղ
	Հայաստանի մասին		Համաշխարհային ժամ
	Արտահայտություններ և անկանոն բայեր		Տեղական ժամանակ
	Հեռախոսահամարներ		PC-Link
	Ժամացուցակ		Տեղադրում

ԲԱՌԱՐԱՆԸ

Բառարան բաժինը բաղկացած է անգլերեն⇔հայերեն, անգլերեն⇔ռուսերեն և հայերեն⇔ռուսերեն երկկողմանի թարգմանությամբ բառարաններից, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է ավելի քան 200 000 բառ:

- *Բառարան* բաժինը բացելու համար սեղմեք SHIFT+DICT:

✓ Համակարգը գործի գցելուց հետո բաժինը բացվում է անգլերեն-հայերեն բառարանով:

Ինչպես նայել բառերը

- Որևէ բառի թարգմանությունը գտնելու համար՝ տպեք այն:

```
   Անգլերեն⇨Հայերեն
explanat|


explanation
```

- Եթե *Խորացված որոնումը* միացված է, Ձեր տպած բառի տվյալ պահին մուտքագրված մասին ամենամոտ ուղղագրությամբ բառը հայտնվում է տպագրվող տողի ներքևում: Երբ այնտեղ հայտնվում է ձեր ցանկացած բառը, սեղմեք ENTER և դրա թարգմանություն(ներ)ը կհայտնվի/կհայտնվեն էկրանին:

✓ Եթե *Խորացված որոնումն* անջատված է, *Բառարանն* ավելի արագ է աշխատում (տես էջ 24):

```
explanation
[N]
բացատրություն;
մեկնաբանություն
```

Սեղմեք՝

- ↓,↑ կոճակները՝ էջը վերև և ներքև սահեցնելու համար.
- ▲, ▼ կոճակները՝ նախորդ և հաջորդ բառերը դիտելու համար:

- Սեղմեք ESC կամ ցանկացած ստեղն, որպեսզի վերադառնաք ստեղնաշարից բառ մուտքագրելու վիճակին և մեկ այլ բառի թարգմանություն դիտեք միևնույն բառարանում:

⇔ կոճակի օգնությամբ կարող եք փոխել թարգմանության ուղղությունը:

- Սեղմեք SHIFT+DICT ստեղնային հրամանը՝ տեղափոխվելու համար հայերեն, անգլերեն և ռուսերեն բառարանների միջև:

Խոսքի մասերը և սեռը նշանակող համառոտագրություններ

Գլխաբառի թարգմանությունները դասակարգված են այբբենական կարգով՝ ըստ տարբեր խոսքի մասերի դրանց պատկանելիության:

A – ածական	ID – արտահայտություն	PHR – դարձվածք
ABBR – հապավում	INTRJ – ձայնարկություն	PREF – նախածանց
ADV – մակբայ	N – գոյական	PREP – նախդիր
ART – հոդ	NPR – հատուկ անուն	PRON – դերանուն
AUX – օժանդակ բայ	NUM – թվական	SUFF – վերջածանց
CONJ – խոնարհում	PART – մասնիկ	V – բայ

Ռուսական գոյականների հետ նշվում է դրանց սեռը և թիվը:

F – իգական	N – չեզոք
M – արական	PL – հոգնակի
MF – արական կամ իգական	

Բառարանում որոշ բառերի և արտահայտությունների կողքին նշված են հետևյալ համառոտագրությունները.

sl. – սլենգ	зап. арм. – արևմտահայերեն	с.-х. – գյուղատնտեսություն
авиа – ավիացիա	зоол. – կենդանաբանություն	сл. – սլենգ
анат. – կազմախոսություն	карт. – թղթախաղ	спорт. – սպորտ
арх. – հնացած	кино – կինո	стомат. – ատամնաբուժություն
архит. – ճարտարապետություն	лингв. – լեզվաբանություն	стр. – շինարարություն
астр. – աստղագիտություն	мат. – մաթեմատիկա	театр. – թատրոն
биол. – կենսաբանություն	мед. – բժշկություն	текст. – մանածագործություն
бот. – բուսաբանություն	метал. – մետաղագործություն	тех. – տեխնիկական
бухг. – հաշվապահություն	метео. – օդերևութաբանական	фарм. – դեղագործություն
воен. – ռազմական	мин. – հանքաբանություն	физ. – ֆիզիկա
вулг. – գռեհկաբանություն	мор. – ծովագնացություն	фон. – հնչյունաբանություն
геол. – երկրաբանություն	муз. – երաժշտություն	фото – լուսանկարչություն
горн. – հանքագործություն	нецензурн. – անվայելուչ	хим. – քիմիա
грам. – քերականություն	перен. – փոխաբերական	церк. – եկեղեցական
		шахм. – շախմատ
		шутл. – կատակային

груб. – գռեհկաբանություն	իմաստով	эл. – էլեկտրոնիկա
ж.-д. – երկաթուղային	разг. – խոսակցական	юр. – իրավաբանություն
жарг. – ժարգոն	рел. – կրոնական	

Սկնբարբային հետադարձ թարգմանություն

Օգտվողների հարմարության համար «ArER430T»-ը թույլ է տալիս *Բառարանում* պարունակվող բոլոր բառերի և արտահայտությունների *Սկնբարբային հետադարձ թարգմանություն* կատարել:

- Սեղմեք ←, → կոճակները՝ հետադարձ թարգմանության համար որևէ բառ կամ արտահայտություն ընտրելու համար:



- Սեղմեք ENTER՝ հետադարձ թարգմանությունը կատարելու համար:

Կարող եք մինչև չորս հետադարձ թարգմանություն կատարել (առանց պատուհանը փակելու): Երբ հետադարձ թարգմանությունների թույլատրված քանակը լրանում է, էկրանին հայտնվում է *Վերջին թարգմանությունն է* հաղորդումը:

Սեղմեք՝

- ESC՝ փակելու համար *Հետադարձ թարգմանության* պատուհանը[4].
- SHIFT+DICT կամ ցանկացած տառ՝ վերադառնալու համար բառի մուտքագրման վիճակին:

«Vector Ultima™» ուղղագրության ստուգիչը

Եթե կասկածում եք որևէ բառի ուղղագրության մեջ, եռալեզու ուղղագրության ստուգիչ «Vector Ultima™»-ն կօգնի Ձեզ:

- Տպեք բառն այնպես, ինչպես լսում եք: Օրինակ՝ «fall»-ի փոխարեն կարող եք տպել «foll»:
- Սեղմեք SHIFT+SPELLER (SHIFT և ▲ կամ ▼ կոճակներից որևէ մեկը): Էկրանին կհայտնվի առաջարկվող տարբերակների ցուցակը:
- Ընտրեք Ձեր փնտրած բառը և սեղմեք ENTER:

✓ Եթե ուղղագրության ստուգիչը ոչ մի տարբերակ չի կարողանում գտնել, էկրանին հայտնվում է *Տարբերակներ չկան* հաղորդումը:

[4] Պատուհանները փակվում են հակառակ հերթականությամբ:

Բառերի և նախադասությունների արտասանությունը

Սարքում տեղադրված հնչյունային ճանաչման համակարգը թույլ է տալիս բարձրաձայն արտաբերել ցանկացած անգլերեն և ռուսերեն բառ կամ նախադասություն:

- Բացեք որևէ բառահոդված:

Սեղմեք՝

  - ◄ լսելու համար գլխաբառի արտասանությունը.
  - SHIFT+◄ լսելու համար բոլոր ցուցադրված թարգմանությունների արտասանությունը:

- Կարող եք նաև լսել տվյալ բառահոդվածի ներսում Ձեր ընտրած ցանկացած բառի կամ բառերի արտասանությունը: Պարզապես նշեք Ձեր ցանկացած բառը կամ բառերը ← կամ → կոճակների օգնությամբ և սեղմեք ◄ կոճակը:

✓ Սարքը կարող է բարձրաձայն արտաբերել ցանկացած տեքստ, անկախ նրանից, այն պարունակվում է բառարանում, թե ոչ: Պարզապես մուտքագրեք որևէ բառ կամ տեքստ՝ համապատասխան *Բառարանի* մուտքագրման տողում և սեղմեք ◄ կոճակը՝ լսելու համար, թե այն ինչպես է արտասանվում:

ՕԳՏՎՈՂԻ ԲԱՌԱՐԱՆԸ

«ArER430T»-ը հնարավորություն է տալիս ստեղծել սեփական բառարան:

- Բացեք *Օգտվողի բառարան* ենթաբաժինը և ընտրեք օգտվողի բառարաններից որևէ մեկը՝ անգլերեն, հայերեն կամ ռուսերեն:

Բառահոդված

Բառահոդվածը բաղկացած է բառից կամ արտահայտությունից, թարգմանությունից և նշումից, թե ինչ խոսքի մասի է այն պատկանում: Այն նաև ցույց է տալիս տվյալ բառահոդվածի հերթական համարը և բառարանում պարունակվող բառահոդվածների թիվը:



Ինչպես բառահոդված ստեղծել

- Բառացանկում գտնված ժամանակ սեղմեք ENTER, որը բաց կանի նոր բառահոդված ստեղծելու պատուհանը:

✓ Եթե բառարանը դատարկ է, նոր բառահոդված ստեղծելու պատուհանը կբացվի ինքնաբերաբար:

- Տպեք բառը կամ արտահայտությունը: Սեղմեք ENTER:

```
Անգլերեն բառ՝        ԱՆԳ
canvas
```

- ⇔ կոճակի օգնությամբ սահմանեք թարգմանվող լեզուն:
- Տպեք թարգմանություն(ներ)ը:

```
Հայերեն բառ՝         ՀԱՅ
քաթան
```

- Կրկին սեղմեք ENTER:
- ↓, ↑ կոճակների օգնությամբ ընտրեք համապատասխան խոսքի մասը նշանակող հապավումը: Սեղմեք ENTER:

```
Խոսքի մաս՝
N
ABBR
ART
ADV
```

Մուտքագրված բառահոդվածը կգրանցվի սարքի հիշողության մեջ և սարքը կվերադառնա բառացանկին:

Ինչպես գտնել բառը

Բառը գտնելու երեք եղանակ կա.

I. Բառացանկում գտնված ժամանակ կարող եք տպել սարքի հիշողության մեջ գտնվող բառահոդվածի գլխավոր բառը: Մուտքագրված բառը ջնջելու համար սեղմեք «Backspace» ստեղնը:

II. Բառահոդվածները դասավորված են այբբենական կարգով՝ ըստ գլխավոր բառի: Կարելի է ▼ կամ ▲ ստեղների օգնությամբ թերթել բառահոդվածները և գտնել անհրաժեշտ բառահոդվածը:

III. Բաց արեք հիմնական բառարանը, ընտրեք թարգմանության ուղղությունը, տպեք Օգտվողի բառարանում գտնվող բառը և սեղմեք ENTER:

✓ Երբ գործում է *Տվյալների պաշտպանությունը*, Օգտվողի բառարանում պարունակվող բառերը չեն երևում Հիմնական բառարանում:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«ArER430T»-ն ունի *Անգլերենի քերականություն* բաժին: *Քերականությունը* միայն անգլերեն լեզվով է՝ անկախ *ցուցադրման լեզվից*:

- *Քերականության* բաժինը բաց անելու համար սեղմեք SHIFT+GRAM:

Քերականություն բաժինը պարունակում է եռամակարդակ՝ մեկը մյուսին ստորադասվող հրամանացանկեր: Երրորդ մակարդակին կարելի է հասնել՝ հրամանացանկից համապատասխան բաժիններ ընտրելով:

ԶՐՈՒՑԱՐԱՆԸ

Զրուցարանը պարունակում է ավելի քան 1100 անգլերեն, հայերեն և ռուսերեն արտահայտություն: Արտահայտությունները բաժանված են 12 խոսակցական թեմատիկ խմբի:

Առօրյայում գործածվող արտահայտություններ	Հաղորդակցություն
Ճանապարհորդություն	Բանկում
Հյուրանոց	Փոխադրամիջոցներ
Ռեստորանում	Առողջություն
Գնումներ	Գեղեցկության սրահ
Տեսարժան վայրերի դիտում	Ոստիկան կանչելը

Խմբերի մեծ մասն իր հերթին ունի ենթախմբեր:

- Սեղմեք SHIFT+PHRASES՝ *Զրուցարան* բաժինը բացելու համար:



- Ընտրեք թեման և սեղմեք ENTER՝ պարունակությունը բացելու համար:

Արտահայտությունները դիտելիս՝

- Սեղմեք ⇔՝ թարգմանության լեզուն փոխելու համար:
- ✓ Թարգմանվող լեզուն համընկնում է *Ցուցադրման լեզվի* հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Այս բաժինը պարունակում է Հայաստանի աշխարհագրությանը և պատմությանը նվիրված հոդվածներ: Բաժինը բաղկացած է չորս մասից՝

Հայոց պատմություն, ժամանակագրություն, Աշխարհագրությունը և *Բնակչությունը*:

- Ընտրեք որևէ հոդված: Սեղմեք ENTER՝ այն կարդալու համար:



ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտահայտություններ բաժնում ընդգրկված են ավելի քան 200 լայն գործածություն ունեցող ամերիկյան արտահայտություններ և նրանց համապատասխանող անգլերեն կամ հայերեն արտահայտությունները կամ թարգմանությունները:

- Սեղմեք SHIFT+IDIOMS՝ *Արտահայտություններ* բաժինը բացելու համար:
- Տպեք Ձեր ցանկացած արտահայտության առաջին տառը և թերթեք ցուցակը՝ այն գտնելու համար:



- Թարգմանությունը հայերենից ռուսերեն կամ հակառակը կարող եք փոխել ⇔ կոճակի օգնությամբ:

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐԸ

Անկանոն բայեր բաժինը պարունակում է անգլերենի բոլոր գործածական անկանոն բայերը՝ այբբենական կարգով դասավորված:

- Սեղմեք SHIFT+VERBS՝ *Անկանոն բայեր* բաժինը բացելու համար:
- Տպեք Ձեր փնտրած բայի առաջին տառը և թերթեք ցուցակը՝ այն գտնելու համար:

- ⇔ կոճակի օգնությամբ կարող եք թարգմանությունը հայերենից ռուսերեն, կամ հակառակը փոխել:

ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԸ

Այս բաժնում կարելի է գրանցել անուններ, հեռախոսահամարներ, ֆաքսի համարներ, ինչպես նաև հասցեներ և էլեկտրոնային հասցեներ՝ անգլերեն, հայերեն և ռուսերեն լեզվով:

- Սեղմեք SHIFT+PHONES՝ *Հեռախոսահամարներ* բաժինը բացելու համար:

Բաժինը բացելուց հետո էկրանին կտեսնեք հեռախոսագրքում պարունակվող համարները:

Անուն՝
Smith John
Հեռախոս՝
+1-9999-999889999
2/5

Ինչպես նոր գրանցում կատարել

- Նոր գրանցում կատարելու էջը բացելու համար՝ հեռախոսագրքում գտնված ժամանակ սեղմեք ENTER: Եթե հեռախոսագրքում ոչ մի գրանցում չկա, նոր գրանցում կատարելու էջը կբացվի ինքնաբերաբար, երբ բացեք հեռախոսագիրքը:
- ⇔ կոճակի օգնությամբ ընտրեք մուտքագրման լեզուն՝ անգլերեն, հայերեն կամ ռուսերեն:
- Սկսեք լրացնել *Անունը* էջը:
- Հաջորդ էջը բացելու համար սեղմեք ENTER:
- Նախորդ էջին վերադառնալու համար սեղմեք ESC:

✓ Հաջորդ էջերին անցնելուց առաջ անհրաժեշտ է անպայման լրացնել *Անունը* էջը:

Ինչպես գտնել գրանցումը

Գրանցումը գտնելու երկու ձև կա.

I. Հեռախոսագրքում գտնված ժամանակ կարող եք սկսել տպել նրանում պահված անունը:

Սեղմեք՝

- ←BS՝ ջնջելու համար մուտքագրված բառը:
- ⇔՝ փոխելու համար մուտքագրման լեզուն՝ անգլերեն, հայերեն կամ ռուսերեն:

II. Գրանցումները սարքի հիշողության մեջ են պահվում այբբենական կարգով: Կարող եք թերթել հեռախոսագիրքը՝ ▼ կամ ▲ կոճակների օգնությամբ և գտնել Ձեր փնտրած գրանցումը:

ԺԱՄԱՑՈՒՑԱԿԸ

Ժամացուցակ բաժինը կօգնի Ձեզ արդյունավետ կերպով կազմակերպել Ձեր օրը:

- Սեղմեք SHIFT+SCHEDULE՝ *Ժամացուցակ* բաժինը բացելու համար: Էկրանին կհայտնվի ցուցակում պահվող առաջին գրանցումը:

Գրանցումները դասավորված են ըստ ամսաթվի և ժամի:

Ամսաթիվ՝ 2003/09/18 ☑
Ժամ՝ 18:49 ♪10 րոպե
Պարունակ.
Meeting
[6/7]

✓ Վերին աջ անկյունի ☑ նշանը ցույց է տալիս, որ գործողությունը տեղի է ունեցել անցյալում:

Ինչպես գրանցում կատարել

- Նոր գրանցում կատարելու էջը բացելու համար՝ *Ժամացուցակում* գտնված ժամանակ սեղմեք ENTER: Եթե *Ժամացուցակում* ոչ մի գրանցում չկա, նոր գրանցում կատարելու էջը կբացվի ինքնաբերաբար, երբ բացեք *Ժամացուցակը*:

Ամսաթիվ՝
2003/09/19
Ժամ՝
13:00
Հիշեցում 00 րոպե

Գրանցման առաջին էջը պարունակում է *Ամսաթիվը*, *Ժամը* և ձայնային *Հիշեցումը*: *Ամսաթիվը* և *Ժամը* որոշում են, թե երբ պետք է գործի *Ժամացուցակի զարթուցիչը*:
Հիշեցումը ցույց է տալիս, թե որքան է մնացել մինչև *Ժամացուցակի զարթուցիչը* գործի:
Երկրորդ էջը՝ *Պարունակությունը*, նկարագրում է պլանավորված գործողությունը:

- Սահմանեք օրը և ժամը և նշեք, թե որքան ժամանակ առաջ եք ցանկանում, որ *Ժամացուցակի զարթուցիչը* գործի:
- ⇔ կոճակի օգնությամբ ընտրեք մուտքագրման լեզուն՝ անգլերեն, հայերեն կամ ռուսերեն:

- Սեղմեք ENTER՝ բաց անելու համար *Պարունակությունը* էջը:
- Սեղմեք ENTER՝ սարքի հիշողության մեջ գրանցելու համար մուտքագրվածը:

✓ *Ժամացուցակի* հիշողությունը կարող է պահել մինչև 50 գրանցում: Երբ գրանցումների թիվն անցնում է թույլատրված սահմանը, էկրանին հայտնվում է *Անբավարար հիշողություն* հաղորդումը:

Ինչպես գտնել գրանցումը

Գրանցումները պահվում են ըստ ամսաթվի և ժամի: ▼ կամ ▲ կոճակների օգնությամբ թերթեք ցուցակը՝ գտնելու համար Ձեզ անհրաժեշտ գրանցումը:

Հիշեցումը և ժամացուցակի զարթուցիչը

Եթե *Հիշեցումը* միացված է, *ժամացուցակի զարթուցիչից* նշված ժամանակ առաջ այն ձայնային ազդանշան է արձակում: Նոր գրանցում կատարելիս *Հիշեցումը* գտնվում է անջատված վիճակում: Յուրաքանչյուր գրանցման համար *Հիշեցման* ժամանակը պետք է սահմանել առանձին:

✓ *Հիշեցումը* և *ժամացուցակի զարթուցիչը* ազդանշան են արձակում անգամ այն ժամանակ, երբ սարքն անջատված է:

✓ Եթե *Հիշեցումը* և *Օրվա զարթուցիչը* միևնույն ժամի վրա են դրված, ապա կգործի միայն *Հիշեցումը*, քանի որ այն ավելի առաջնահերթ է:

Այդ ժամանակ էկրանին կհայտնվի *ժամացուցակի* համապատասխան գրանցումը:

- *ժամացուցակի զարթուցիչի* կամ *Հիշեցման* ազդանշանը դադարեցնելու համար սեղմեք ցանկացած ստեղն:

Կարող եք փոփոխություն կատարել գրանցման մեջ և *Հիշեցման* ժամը սահմանել ավելի ուժ ժամի վրա: *ժամացուցակի հիշեցման* էկրանը փակելով, Դուք կհայտնվեք այն բաժնում (օրինակ՝ *Բառարան*), որում գտնվում էիք մինչև ազդանշանը:

ՀԱՇՎԻՉԸ

- Սեղմեք SHIFT+CALC՝ բացելու համար *Հաշվիչը*:

Հաշվիչ բաժնում գտնված ժամանակ ստեղնաշարից թվեր և գործողություններ մուտքագրելիս, կարիք չկա սեղմելու SHIFT ստեղնը: Այս բաժնից օգտվեք այնպես, ինչպես սովորական գրպանի հաշվիչից:

ՓՈԽԱՐԿՈՒՄ

«ArER430T»-ի օգնությամբ Դուք կարող եք առանց դժվարության փոխարկել ամերիկյան-բրիտանական չափ ու կշռի համակարգը մետրային համակարգի, որը գործում է Եվրոպայում, և հակառակը: Կարող եք նաև փոխարկում կատարել յուրաքանչյուր համակարգի ներսում:

- Բացեք *Փոխարկում* բաժինը:
- ↓,↑ կոճակների օգնությամբ ընտրեք ենթաբաժինը և սեղմեք ENTER:
- Տպեք փոխարկման ենթակա արժեքը:

✓ ենթաբաժնում կարող է լինել չափ ու կշռի ավելի քան չորս միավոր:

ԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

Արժույթի փոխանակում բաժինը հնարավորություն է տալիս արագորեն հաշվարկել նախորոք սահմանված ինը արժույթների և օգտվողի ավելացրած երեք լրացուցիչ արժույթների հարաբերությունը:

- Բացեք *Արժույթի փոխանակում* բաժինը:

Փոխարժեքի սահմանումը և ստուգումը

- Արժույթի անունը և փոխարժեքը նշելու համար բացեք *Սահմանել փոխարժեքը* ենթաբաժինը:
- Ընտրեք արժույթը: Սեղմեք ENTER:

✓ Դուք կարող եք սահմանել կամ փոխել նշված ցանկացած արժույթի անունը: Լրացուցիչ արժույթների համար ցուցակի վերջում կա «???» նշաններով նշված երեք լրացուցիչ տող, որոնց փոխարեն կարող եք գրել արժույթի անվանումը:

- Փոխեք/սահմանեք արժույթի անունը: Սեղմեք ENTER՝ բացելու համար հաջորդ պատուհանը:
- Սահմանեք փոխարժեքը՝ հիմնական արժույթի համեմատությամբ (որի փոխարժեքը պետք է հավասար լինի 1-ի):

✓ Նախնական վիճակում բոլոր արժույթների փոխարժեքը հավասար է 1-ի:

- Փոփոխությունները գրանցելու համար սեղմեք ENTER:

Փոխարկումը

- Բացեք *Հաշվարկում* ենթաբաժինը:
- Ընտրեք արժույթը և գրեք գումարը:

Գումարը մուտքագրելու ընթացքում դրան համապատասխանող գումարը հայտնվում է յուրաքանչյուր արժույթի դիմաց:

«ԴԱՀԻՃ» ԲԱՌԱԽԱՂԸ

«ArER430T»-ում կա *«Դահիճ»* կոչվող ուսումնական խաղ, որն օգնում է ամրապնդել բառերի ուղղագրության գիտելիքները և հարստացնել բառապաշարը:

- Սեղմեք SHIFT+GAME՝ *«Դահիճ»* խաղը բացելու համար:
- Ընտրեք խաղի լեզուն և սեղմեք ENTER:
- ⇔ կոճակի օգնությամբ ընտրեք թարգմանվող լեզուն:

Լեզուն ընտրելուց հետո նոր խաղ կսկսվի:

- Աշխատեք գուշակել աստղանիշերով ծածկագրված բառի տառերը և տպել դրանք:

Ճիշտ գուշակված տառը հայտնվում է աստղանիշի փոխարեն: Էկրանի ներքևի մասում գտնվող թիվը ցույց է տալիս, թե քանի փորձ է Ձեզ մնացել:

- Խաղի ժամանակ ծածկագրված բառի թարգմանությունը տեսնելու համար սեղմեք ENTER (դա կհաշվվի որպես մեկ փորձ): Թարգմանությունը փակելու համար սեղմեք ESC:
- Ծածկագրված անգլերեն կամ ռուսերեն բառի արտասանությունը լսելու համար սեղմեք ◄ կոճակը (դա կհաշվվի որպես մեկ փորձ):
- Խաղն ավարտվելուց հետո ծածկագրված բառն՝ իր թարգմանություն(ներ)ի հետ միասին կհայտնվի էկրանին:
- Սեղմեք ESC՝ նոր խաղ սկսելու համար:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՄ

Համաշխարհային ժամ բաժնում Դուք կարող եք իմանալ, թե ժամը քանիսն է աշխարհի տարբեր քաղաքներում:

- Բացեք *Համաշխարհային ժամ* բաժինը:



Համաշխարհային ժամի էջը ցույց է տալիս նշված քաղաքի անունը, երկիրը (եթե օգտվողն այլ քաղաք չի ընտրել, առաջինը կհայտնվի Նյու Յորք, ԱՄՆ), ամսաթիվը, շաբաթվա օրը և ժամը տվյալ քաղաքում:

- Որևէ այլ քաղաքի մասին տեղեկություն ստանալու համար թերթեք այբբենական կարգով դասավորված ցուցակը՝ 🡻 և 🡹 կոճակների օգնությամբ:
- Նույն երկրում գտնվող որևէ այլ քաղաքի մասին տեղեկություններ ստանալու համար թերթեք այբբենական կարգով դասավորված ցուցակը՝ ▼ և ▲ կոճակների օգնությամբ:
- Դուք կարող եք նաև արագորեն գտնել Ձեր ցանկացած քաղաքը՝ տպելով քաղաքի առաջին տառը և թերթելով ցուցակը:

- Ձեր ցանկացած քաղաքը գտնելուց հետո սեղմեք ENTER՝ փոփոխությունները սարքի հիշողության մեջ գրանցելու համար: Հաջորդ անգամ այս բաժինը բացելուց, Ձեր ընտրած քաղաքը առաջինը կհայտնվի:

ՏԵՂԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

- Սեղմեք SHIFT+TIME՝ *Տեղական ժամանակը* բաժինը բացելու համար:

Տեղական ժամանակը բաժինը պարունակում է ընտրված քաղաքի անունը և երկիրը (եթե օգտվողը չի փոխել, ապա դա Երևանն է և Հայաստանը), ամսաթիվը, շաբաթվա օրը և ժամը տվյալ քաղաքում: Այս տվյալները կարելի է փոփոխել *Տեղադրում* բաժնում:

PC-LINK

«ArER430T»-ի *PC-Link* մալուխի (որը տրամադրվում է առանձին, Կապի հաստատման փաթեթում) և *PC-Link* ծրագրի (որն ընդգրկված է ստանդարտ փաթեթի մեջ՝ լազերային սկավառակի վրա) օգնությամբ կարելի է տվյալներ փոխանակել «ArER430T»-ի և համակարգչի միջև: Դա Ձեզ հնարավորություն կտա *Հեռախոսների*, *ժամացուցակի* և *Օգտվողի բառարանների* պատճենները պահել Ձեր համակարգչում:

Ծրագիրը

- Փաթեթում գտնվող լազերային սկավառակը տեղադրեք համակարգչի լազերային սկավառակի բաժանմունքում: Եթե տեղադրման ծրագիրն ինքնաբերաբար չբացվի, գործի գցեք լազերային սկավառակի առաջին մակարդակում գտնվող «INSTALL.exe» ֆայլը:
- Համակարգչի էկրանին հայտնված հրամանացանկից ընտրեք *ArER430T PC-Link-ը*:

- Համակարգչի վրա ծրագրի տեղադրումից հետո բացեք այն՝ սեղմելով «Start/Programs/Ectaco»: Համակարգի պնակում (System Tray) կհայտնվի 🔄 պատկերագիրը:

✓ *PC-Link* ծրագրի վերջին տարբերակը կարելի է ձեռք բերել «Ectaco»-ի ինտերնետային էջից՝ **www.ectaco.com** հասցեով:

Ուղարկելը և ստանալը

- *PC-Link*-ի մալուխը միացրեք սարքի աջ կողմում գտնվող *PC-Link*-ի բնիկին:
- Սեղմեք SHIFT+PC-LINK՝ *Կապ համակարգչի հետ* բաժինը բացելու համար:
- Մկնիկի աջ կոճակով սեղմեք Համակարգի պնակում գտնվող *PC-Link* պատկերագրի վրա և ընտրեք տվյալների փոխանակման համապատասխան հրաման:

✓ Համոզվեք, որ մալուխը ճիշտ COM պորտին է միացված:

✓ *ArER430T PC-Link*-ի հետ միաժամանակ այլ *PC-Link* ծրագիր չի կարելի աշխատեցնել համակարգչի վրա:

- Ընտրեք *Ուղարկել տվյալները* հրամանը և սեղմեք ENTER:
- Ընտրեք այն բոլոր բաժին(ներ)ը, որոնց տվյալները ցանկանում եք ուղարկել համակարգիչ: SPACE ստեղնի միջոցով կարելի է նշան դնել կամ հանել բաժինների դիմաց գտնվող վանդակներում:



- Տվյալների ուղարկումը սկսելու համար սեղմեք ENTER:

✓ Տվյալների ուղարկումը սկսեք նախ ստացող սարքում, ապա ուղարկող սարքում:

- Համակարգչից տվյալներ ներմուծելու համար ընտրեք *Ստանալ տվյալներ* հրամանը: Սեղմեք ENTER և տվյալները կսկսեն ներմուծվել:

✓ Տվյալների ուղարկման գործողությունը սարքի վրա պետք է սկսվի ոչ ուշ, քան համակարգչի վրա նրա սկսվելուն հաջորդող 30 վայրկյանի ընթացքում:

✓ Հիշեք, որ *Ստանալ տվյալներ* հրամանի կատարման ժամանակ նոր ներմուծվող տվյալները կփոխարինեն սարքի համապատասխան բաժնում պահված հին տվյալները: Այն դեպքում, երբ դատարկ

բաժիններ են ներմուծվում, «*ArER430T»-ի* համապատասխան բաժիններում պահված բոլոր հին տվյալները կջնջվեն:

✓ **Միշտ համակարգչի վրա տեղափոխեք Ձեր կարևոր տեղեկությունները:** Կորած կամ փչացած տվյալների համար պատասխանատու չեն ո՛չ արտադրողը և ո՛չ էլ վաճառողը:

✓ «PC-Link»-ը գործածելիս խորհուրդ է տրվում օգտվել հոսանքի արտաքին աղբյուրից:

ՏԵՂԱԴՐՈՒՄ

Տեղադրում բաժնում, ձևափոխելով «ArER430T»-ի հատկանիշները, կարելի է այն լավագույնս հարմարեցնել Ձեր պահանջներին և պահպանել Ձեր անձնական տեղեկությունները:

- Սեղմեք SHIFT+SETUP՝ բաց անելու համար *Տեղադրում* բաժինը:

Տեղադրում բաժնի հատկանիշների մեծ մասը շատ հեշտ է փոփոխելը: Եթե այս ձեռնարկում այլ կերպ չի նշված, ապա հարկավոր է բացել համապատասխան բաժինը և ↓ և ↑ կոճակների օգնությամբ ընտրել Ձեր ցանկացած տարբերակը: Այնուհետև հարկավոր է սեղմել ENTER՝ հաստատելու համար Ձեր ընտրությունը:

Ցուցադրման լեզուն

Նախնական վիճակում «ArER430T»-ի ցուցադրման լեզուն անգլերենն է: Հնարավոր ցուցադրման լեզուներն են անգլերենը, հայերենը և ռուսերենը:

Խորացված որոնում

Եթե *Խորացված որոնումը* գործում է, ապա որևէ բառ մուտքագրելու ընթացքում տպագրվող տողի ներքևում կհայտնվի բառի մինչ այդ տպագրված մասին ամենամոտ բառը՝ աստիճանաբար նեղացնելով որոնման շրջանակը: *Խորացված որոնումն* անջատելով կարելի է արագացնել բառարանի աշխատանքը: Նախնական վիճակում *Խորացված որոնումն* անջատված է:

Սլենգի զտիչը

Այս բաժնում Դուք կարող եք թաքցնել բառարանի մեջ պարունակվող սլենգային բառերն ու արտահայտությունները: Օրինակ՝ կարող եք թույլ չտալ, որ Ձեր երեխաները տեսնեն դրանք:
Նախնական վիճակում *Սլենգի զտիչը* միացված է. Այն անջատելու համար հարկավոր է տպել ***showslan*** նշանաբառը և սեղմել ENTER:

Ռուսական ստեղնաշարը

Այս բաժնում Դուք կարող եք ընտրել առկա ռուսական ստեղնաշարերից որևէ մեկը՝ *Ավանդական* կամ *Հնչյունային*:
Ավանդական ռուսական ստեղնաշարի դեպքում ռուսական տառերը համապատասխանում են սարքի ստեղների վրա նշվածին:
Հնչյունային ռուսական ստեղնաշարի դեպքում ռուսական տառերն իրենց հնչողությամբ համապատասխանում են անգլերեն տառերին, օրինակ՝ ռուսական «Ф» տառը ստանալու համար հարկավոր է սեղմել «F» ստեղնը:

Ստեղների ձայնը

Երբ այս հատկանիշը միացված է, որևէ ստեղն սեղմելիս կարճ ազդանշան է լսվում: Նախնական վիճակում ստեղների ձայնը միացված է:

Ժամացույցը

Այս բաժնում Դուք կարող եք, որոշել, թե որ քաղաքը պետք է հայտնվի *Տեղական ժամանակը* բաժնում և սահմանել տեղական ժամը:

✓ Նախնական վիճակում սարքը ցույց է տալիս Հունվարի 01, 2003, 00:00 (12:00 AM), և Երևան, Հայաստան:

- Բացեք *Ժամացույց* ենթաբաժինը:

```
Տեղական ժամանակը

ՏՏՏՏ/ԱԱ/ՕՕ =2003/09/19

13:12
```

- Մուտքագրեք ներկա ամսաթիվն ու ժամը:
- Սեղմեք ENTER՝ փոփոխությունները գրանցելու համար:

Հաջորդ քայլին կարող եք ընտրել քաղաքը:

```
Երևան
Հայաստան

+04:00 (GMT)
```

Էկրանին դուք կտեսնեք քաղաքի և երկրի անունը և տեղական ժամանակի հարաբերությունը Գրինվիչի ժամանակի հետ: Եթե ցանկանում եք իմանալ տեղական ժամանակը որևէ երկրում կամ քաղաքում կարդացեք էջ 22-ը:

- Ձեր ցանկացած քաղաքը գտնելուց հետո սեղմեք ENTER՝ փոփոխությունը գրանցելու համար:

Ամսաթվի տեսքը

Նախնական վիճակում սահմանված Տարի-Ամիս-Օր հաջորդականությունը կարելի է փոխել և դարձնել Օր-Ամիս-Տարի կամ Ամիս-Օր-Տարի:

Ժամի տեսքը

Նախնական վիճակում սահմանված 24-ժամյա համակարգը կարելի է փոխել ամերիկյան՝ 12-ժամյա համակարգի:

Ժամացուցակի զարթուցիչը

Այս բաժնում կարելի է միացնել կամ անջատել *ժամացուցակի զարթուցիչը*: Միացված վիճակում (նախնական վիճակում այն միացված է) *ժամացուցակի զարթուցիչը* կգործի *ժամացուցակում* պլանավորված գործողության օրը և նշված ժամին՝ արձակելով ձայնային ազդանշան:

Օրվա զարթուցիչը

- Բացեք *Օրվա զարթուցիչ* ենթաբաժինը:

✓ Նախորոք սահմանված ժամն է՝ 00:00, և զարթուցիչն անջատված է:

Սեղմեք՝

- ←, → թոպեից ժամին և հակառակը անցնելու համար.
- A, P՝ համապատասխանաբար AM կամ PM ընտրելու համար.
- ▼, ▲ զարթուցիչը միացնելու/անջատելու համար:

- Սեղմեք ENTER՝ փոփոխությունները գրանցելու համար:

Եթե *Օրվա զարթուցիչը* միացված է, այն որոշված ժամին ձայնային ազդանշան է արձակում:

- *Օրվա զարթուցիչի* ազդանշանը դադարեցնելու համար սեղմեք ցանկացած ստեղն (հակառակ դեպքում ազդանշանը կշարունակվի 30 վայրկյան):

Հիշողության ստուգումը

Տեղադրում բաժնի այս ենթաբաժինը հնարավորություն է տալիս ցանկացած պահի ստուգել առկա հիշողության մակարդակը:

- Բացեք *Հիշողության ստուգում* ենթաբաժինը՝ տեսնելու համար, թե որքան ազատ հիշողություն կա Ձեր տրամադրության տակ:

Տվյալների ջնջումը

Տվյալների ջնջում ենթաբաժինը հնարավորություն է տալիս ազատել հիշողությունը՝ գրանցումները ջնջելով շատ ավելի արագորեն, քան մեկ առ մեկ դրանք ջնջելը:

Նշանաբառ սահմանեք

Առանց նշանաբառի սահմանման (նախնական վիճակում սարքը նշանաբառ չունի) «ArER430T»-ի բոլոր գործողությունները մատչելի են ցանկացած օգտվողի համար: Նշանաբառ սահմանելուց հետո հետևյալ բաժինները անձեռնմխելի կլինեն չարտոնված օգտվողի համար. *Հեռախոսներ, ժամացուցակ, Օգտվողի բառարաններ, Կապ համակարգչի հետ, Տվյալների ջնջում, Տվյալների պաշտպանություն, Նշանաբառ սահմանեք*:

Վերը նշված բաժիններից որևէ մեկը բացելու համար՝ օգտվողը պետք է իմանա նշանաբառը:

- Բացեք *Նշանաբառ սահմանեք* ենթաբաժինը:

```
Տպեք նոր նշանաբառը

[********| ]
```

- Մինչև 8 նիշ պարունակող նշանաբառ սահմանեք և սեղմեք ENTER:
- Հաստատելու համար նորից տպեք նշանաբառը և սեղմեք ENTER:
- ✓ Միշտ հիշեք նշանաբառը: Եթե մոռանաք այն, ստիպված եք լինելու վերագործարկել համակարգը, որի հետևանքով կկորցնեք օգտվողի բոլոր տվյալները:

Ինչպես փոխել նշանաբառը

- Բացեք *Նշանաբառ սահմանեք* ենթաբաժինը: Տպեք գործող նշանաբառը և սեղմեք ENTER:
- Տպեք նոր նշանաբառը և սեղմեք ENTER:
- Հաստատելու համար նորից տպեք նշանաբառը: Սեղմեք ENTER՝ նոր նշանաբառը սարքի հիշողության մեջ գրանցելու համար:

Ինչպես հանել նշանաբառը

- Բացեք *Նշանաբառ սահմանեք* ենթաբաժինը: Տպեք գործող նշանաբառը և սեղմեք ENTER:
- Հաջորդ երկու քայլերին ոչինչ մի տպեք և պարզապես սեղմեք ENTER երկու անգամ:

Տվյալների պաշտպանությունը

Տվյալների պաշտպանություն ենթաբաժնի օգնությամբ Դուք կարող եք պաշտպանել Ձեր անձնական գրանցումները և կողպել *Կապ համակարգչի հետ* բաժինը:

- Բացեք *Տվյալների պաշտպանություն* ենթաբաժինը:

Երբ ընտրված է ON տարբերակը, Ձեր անձնական տվյալները կողպված են, և ցուցիչ տողի վրա երևում է 🔑 նշանը:

✓ Սարքն անջատելուց առաջ խորհուրդ է տրվում փակել նշանաբառով պաշտպանված բաժինները:

Տվյալների պաշտպանությունը կարելի է չեղարկել՝ տպելով նշանաբառը, այն ժամանակ, երբ՝

- *Տվյալների պաշտպանության* ենթաբաժնում ընտրված է OFF տարբերակը.
- Բաց է պաշտպանված որևէ բաժին:

Պատկերի սրությունը

Պատկերի սրության նախասահմանված աստիճանը կարելի է փոխել *Պատկերի սրությունը* ենթաբաժնում:

- Պատկերի սրության աստիճանը կարելի է փոխել 🡐 և 🡒 կոճակների օգնությամբ:

Խոսքի հատկանիշները

Փոփոխելով սարքի մեջ գտնվող խոսքային փոխակերպիչի արագությունը և հաճախականությունը՝ կարելի է այն հարմարեցնել Ձեր սեփական արտասանությանը:

Խոսքի հաճախության և *Խոսքի արագության* սանդղակների միջև կարելի է տեղաշարժվել ENTER ստեղնի օգնությամբ, իսկ դրանցից յուրաքանչյուրի մակարդակը փոխելու համար հարկավոր է օգտվել 🡐 և 🡒 կոճակներից:

Ինքնանջատման ժամ

Ինքնանջատման ժամը դրված է 3 րոպեի վրա: Ինքնանջատման ժամը հնարավորություն է տալիս խնայել մարտկոցի էներգիան՝ ինքնաբերաբար անջատելով սարքը, երբ այն գործածության մեջ չէ մի որոշ ժամանակ: Ինքնանջատման ժամը կարող է լինել 1-ից մինչև 5 րոպե: